երգելով երկրորդի , կամ կրկնողի հետ մինչեւ առաջին , կրկնուող երաժշտական նախադասութեան վերջը , շարունակում է երկրորդ նախադասութիւն, որի վերջին յանգաւոր ոտքից միանում է առաջին երգողը եւ կրկնում է երկրորդ նախադասութիւնն ամբողջ ։ Վերջին յանգաւոր ոտից միանում է նորից առաջին երգիչը եւ այսպէս , օղակ օղակ չդիմայուելով , հանգոյց են կապում ամբողջ երգի սկզբից մինչեւ վերջը ։

Երբեմն միանում է մի խմբին մի ուրիշ գիւղի խումբ եւ , իւրաքանչիւրը իր անկախութիւնը պահելով, միմեանց հետ մրցում են հարց ու պատասխան տալով ։

Այս դէպքում, ամէն մի խումբ, վերը նկարագրած ձեւով երգելուց զատ , իւրաքանչիւր մէջ էլ , փոխէփոխ են անում եւ հանգոյց կապում ։

Բարդ ձեւերն աւելի յատուկ են պարերգերի համար ։

Յատն ձեւն առաջ է գալիս , երբ միայնակ կամ խմբով երգելն իրարու յաջորդում են առանց կանոնաւոր հերթ պահելու ։ Յատն եւ ապատ ձեւով ասում են գուսանները եւ կալերգերը։

Բազմաձայնութեան հետ . — Թէպէտ հայ ժողովրդական երաժշտութիւնը բազմաձայնութիւն չգիտէ , բայց եւ յաճախ պատահում են դէպքեր, որոնք ցոյց են տալի կանոնաւոր երկձայնի նշաններ ։

Երբ երգ սկսողը այնքան բարձրից է բռնում եղանակը, որ ձայնաստիճանը միջակ ձայներին է ճնշում, կամ այնքան ցածից է առնում, որ բարձրերին է խեղդում, տուժողները փոխում են ձայնաստիճանը եւ լարում իրենց ձայներին այնպէս յարմար, որ նորը հինին զաշնաւոր լինի , որ վերջին եղանակը առաջինին համաձայն գայ ։

Եւ երբ զանազան ձայնաստիճաններով լարուած եղանակներն ասում են պարերգի բարդ ձեւով , երկձայնութիւն է դուրս գալի ։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ՀԱՑ ԷՋԵՐ

Տաղ Ս. Աստուածածնին

Աղբի՛ւր կենդանի , Բոլոնուն զանազան ,
Մեղա՛յ քեզ մեղայ , կո՛յս անապական .
Գլուխ կուսանաց , Դասուց դու պարծանք ,
Մեղա՛յ քեզ մեղայ , կո՛յս անապական ։

Երեսիդ փափաք՝ Զօրքըն վերնական ,
Էրանեալ Ընտիր թաք (1) ու աննրման ,
Ժառանգող (2) դրախտին եւ արքայութեան ,
Մեղայ քեզ մեղա՛յ , կո՛յս անապական ։

Ի փառըս Լուսոյ Խորհո՛ւրդ հիացման ,
Ծընո՛ղ կենդանի Յիսուսի իշման ,
Համաւո՛ր բաժակ , Ջե՛ռդ փրկութեան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ , կո՛յս ամ ապական ։

Ղամբա՛ր Հշմարիտ Մեծ ուրախութեան ,
Յոսկի տուփ խնծո՛ր , Նորոգո՛ւմն ական ,
Շնորհիւ քո լրցան Որ՝ հիք Ադամեան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ , կո՛յս անապական ։

Զարին հալածիչ (3) , Պրտո՛ւղ սրբութեան ,
Ջա՛հ մաքուր ոսկի լուսով աննրման .
Ռատվա՛զ (3) աղբիւր , ջուր անմահութեան ,
Մեղա՛յ քեզ մեղայ , կո՛յս անապական ։

Սրբովքէ սէր սուրբ վերին պետութեան ,
Տուն Յիսուս որդւոյն եւ բընակարան ,
Բաբուկի կուսից , Ցաւոց քաւարան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ , կո՛յս անապական ։

Իիւսեալ ի լուսոյ մայր ուրախութեան ,
Մեռեալքըս մեղօք (4) քեւ առողջացան .
Փառքք Փո որդւոյն այժմ եւ յաւիտեան ,
Մեղա՛յ քեզ մեղա՛յ , կո՛յս անապական ։

Դու լա՛լ մեծագին որ ի պատաշխան ,
Եաղո՛ւթ ու զըմրուխտ եւ ա՛յլ պատուական ,
Ա՛կ ես լուսատու , գա՛նձ արքայական .
Մեղա՛յ քեզ մեղայ , կո՛յս անապական ։

(1) Թերեւս՝ Ծագ. աւելի հաւանականաբար՝ Թրքերէն «Թէք» ն է , «մէկ հատիկ» իմաստով ։ — (2) Ձեռագ. Ժառանգաւոր ։ (3) Ձեռ. ծնաւոր ։ (2) Ձեռ. հալածել ։ (3) Առատավազ . (4) Ձեռ. մեղաւք ։

digitised by A.R.A.R.@

Զքեզ միշտ կու գովին Խաթա 'ւ ի Խրթան,
Զրմուռ եւ ըզտաշխ եւ ըզկասիան,
Եւ այլ ծխանելիք պէտք է սրբութեան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Դու ես համասփիւռ ծաղկանց ամիրան,
Քեռաֆիր վարդ պայծառ հոտով եւ բուրման,
Դու լուսի՛ն աշնան, դու արե՛ւ գարնան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Դրրախտն Ադամայ չէ ի քեզ նրման,
Ծառանգողք դրախտին յօծէն խաբեցան,
Խաբողքն եւայի քեզ ոչ մերձեցան.
Մեղայ քեզ մեղա՛յ, կոյս անապական:

Թէ զերկինքն ասեմ՝ չէ ի քեզ նրման.
Հրեշտակք ի յերկնից յերկիր թափեցան,
Եւ դու հողածինք յերկինս վերացան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Ի քեզ պարբապեալ Բանըն հայրական,
ԶԳաբրիէլ հրեշտակն եդիր պահապան,
Հեռացան ի քէն որդիք կորրստեան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Ցարգանդ բաւեցիր զՏէրն անբաւական,
Աչերդ է սովոր ասատուածտեսութեան,
Կաթամբ սընուցեր զորդիդ աննրման.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կոյ՛ս անապական:

Մոցդ է անմատոյց խորանի նրման.
Գիրկդ է սերովբէ կայ ի տարածման.
Միտք ոչ հասանեն քեզ անհասական.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Դրրա՛խտ լուսեղէն, պըտո՛ւղ մաքրական.
Պրտղովդ ապրեցան որք անմահացան.
Գրտան առ ի քէն գիր ազատութեան,
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Ընտրեաց զքեզ ի կուսից ինքն ընտրողական,
Դու կաս եւ մընաս անուն յաւիտեան,
Պրտուղ Աննայի եւ Յովակիմայն.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Ով աստ կու կենան քեզմով կու կենան,
Ըզքեզ կու հային քեզնով պարծենան,
Զքեզ փառաւորեն աշխարհ ամենայն.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Դու ես Արեւելք լուսատու մարդկան,
Սիրտդ Արեմուտք մեծ խորհրդական.
Հիւսիս եւ հարաւ սընարքդ ի նմա՝.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Աջդ քո Փիսոն երթար Վրրաստան,
Ահեակդ Դեջլա՝ ի Հապաշաստան՝,
Նայելիքդ Տիգրիս, Եփրատ գընացման.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Աջդ Յովհաննէս է վրկայութեան,
Ահեակդ Մաթէոս է (1) Ճշմարտաբան,
Ղուկաս եւ Մարկոս դէմքդ եւ Թիկան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Աջդ առիւծոյ Իւ ահեակդ եզին,
Եւ դէմքդ մարդոյ լուսով կազմութեան.
Գրկելիքդ արծուոյ սաւառնաթեւեան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Երբ քո միածինդ գայ ի դատաստան,
Եւ անդ ժողովին աշխարհի ամենայն,
Դու բարեխօսես վասըն փրկութեան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական,

Դու ես անՆրման, դու ես անՆրման,
Դու ես անՆրման. ոչ կայ քեզ նրման,
Ոչ կայ քեզ նրման, ոչ տի գայ նրման,
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Այս աշրխ Քօչէկս որ կ'ասեն ի Վան,
Զար վիրօք իլի (2) եւ դատարկաբան,
Որդն եմ եւ փոշի եւ հող անպիտան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Տրուէք զողորմին 'ւ ասէք զՀայր մեղան
Աշրխ Քէօչէկին հոգոյն միաբան,
Որ եւ դուք լինիք ողորմու արժան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

Աշխարհս է նանիր ծաղիկն ի նրման,
Որ այսօրրս կան եւ վաղրն չրկան,
Տէրն հեռացնէ ի ձէնջ զսատանան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական:

(1) Ձեռ. եւ։
(2) Ի լի, լեցուն։

digitised by A.R.A.R.@